

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ 2015Թ.
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2015թ. առաջին կիսամյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը կարելի է գնահատել բավարար: 2015թ. 1-ին կիսամյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը համադրելի գներով կազմել է՝ 61029.4 մլն դրամ, 2014թ. նույն ժամանակաշրջանի 34112.6 մլն դրամի դիմաց կամ արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 178.9% (հանրապետականը՝ 105.1%), բացարձակ աճը՝ 26916.8 մլն դրամ: Ընթացիկ գներով թողարկվել է 57689.2 մլն դրամի արտադրանք: Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում (ընթացիկ գներով) 1-ին կիսամյակի արդյունքներով կազմել է 9.4 % (4-րդ ցուցանիշը): Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 59684,7 մլն դրամ, աճի ինդեքսը՝ 178.2%, որից ԱՊՀ երկրներ՝ 543.2 մլն դրամ (0.9%) և այլ երկրներում 36990.6 մլն դրամ (62.0%):

Մարզում արդյունաբերության ծավալի աճը հիմնականում արդյունք է «Թեղուտ» ՓԲԸ-ի շահագործման:

Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2015թ. 1-ին կիսամյակի արդյունքներով ունեն այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն՝ 24129.9 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 98.7% և տեսակարար կշիռը՝ 39.5% (2014թ. 1-ին կիսամյակ՝ 71.7%);
- հանքարդյունաբերություն՝ համապատասխանաբար՝ 31092.7 մլն դրամ, 6.2 անգամ և 50.9% (2014թ. 1-ին կիսամյակ՝ 14.6%);
- էլ.էներգիայի արտադրություն՝ համապատասխանաբար՝ 5297.3 մլն դրամ, 126.8% և 8.7% (2014թ. 1-ին կիսամյակ՝ 12.2%);
- ջրամատակարարում, թափոնների մշակում և այլ ճյուղեր՝ համապատասխանաբար՝ 509.4 մլն դրամ, 103.5% և 0.8% (2014թ. 1-ին կիսամյակ՝ 1.4%):

2015թ. արտադրության ընդհանուր ծավալում նվազել են մշակող արդյունաբերության, էներգետիկայի և այլ ճյուղերի տեսակարար կշիռները, մեծացել է հանքարդյունաբերության կշիռը՝ 36.3 %-ով:

2015թ. առաջին կիսամյակում մարզի 18 արտադրական ձեռնարկություն արտադրանք չեն թողարկել, 2014-ի նույն ժամանակաշրջանի 19-ի դիմաց: Ընդհանուր առմամբ վիճակագրական հաշվետվություն ներկայացրած մարզի 115 արտադրական ձեռնարկություններից ընթացիկ գներով առաջին կիսամյակում արտադրության ծավալի նվազում են ունեցել 42-ը (ձեռնարկությունների 36.5%-ը), առավել մեծ նվազում ունեն Վանաձորի «Բիոնիկ» ՍՊԸ-ն՝ 85.2%, «Սեդա Բոջուկյան» ՍՊԸ-ն 37.8%, «Հարատիդ» ՍՊԸ-ն 34.4%, Ստեփանավանի «Կաբինետ» ՍՊԸ-ն՝ 58.6%, Տաշիրի «Սեդրակ և Տիգրան» ՍՊԸ-ն 70.0%, Գուգարքի անտառտնտեսությունը՝ 69.6% և այլն: Առաջին կիսամյակում էլ.էներգիա արտադրող 28 ձեռնարկություններից միայն 2-ն են բնեղեն արտահայտությամբ իջեցրել արտադրության ծավալները («Լոռի-1» հողմակայան՝ 9.1 %, «Ապահով տանիք» ՍՊԸ-ն՝ 2.3%-ով):

Առաջին կիսամյակում տարբեր պատճառներով արտադրանք չեն թողարկել Վանաձորի «ՀԿՄ Վանաձորի ՈՒԱՁ» ՍՊԸ-ն, Ստեփանավանի «ԲՀԷՍ Պլազմա» ԲԲԸ-ն, «Տրանսֆորմ էներջի Գրուպ» ՍՊԸ-ն և այլն:

2015թ. առաջին կիսամյակում առաջին անգամ արտադրանք են թողարկել կամ վերականգնել են նախկին արտադրությունները՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն (21.8 մլրդ դրամ) և Վանաձորի «ԹԱԼԳՐԻԳ Գրուպ» ՍՊԸ-ն, ինչպես նաև 2 փոքր ՀԷԿ-եր՝ «Մարց էներջի» ՍՊԸ-ն և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն:

Առաջին կիսամյակի արդյունքներով մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն «Թեղուտ» ՓԲԸ-ն՝ 35.7%, «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 22.8%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 5.4%, Ստեփանավանի «Սազամար» ՍՊԸ-ն՝ 4.0%, Սպիտակի «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 2.2%, Գուգարքի «Ձորագետ Հիդրո» ՍՊԸ-ն՝ 2.1%, Վանաձորի «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 0.9%, «Բետոն» ԱԿ-ն՝ 0.7%, Տաշիրի «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ն՝ 0.5% և այլն:

2015թ. մարզի մշակող արդյունաբերության մեջ ընթացիկ գներով ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

Հազ. դրամ

Հ/հ	Ճյուղի անվանումը	2015թ. 1-ին կիս.	2014թ. 1-ին կիս.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Տեսակարար կշիռը, %	
						2015թ.	2014թ.
1	Քիմիական արդյունաբերություն	287689.0	138801.0	207.3	+148888.0	1.2	0.6
2	Թեթև արդյունաբերություն	759275.0	1160875.0	65.4	-401600.0	3.1	4.7
3	Սննդի արդյունաբերություն	8059910.0	7882627.0	102.2	+177283.0	33.4	32.2
4	Մեքենաշինություն և սարքաշինություն	167460.0	245931.0	68.1	-78471.0	0.7	1.0
5	Փայտամշակում և կահույքի արտադրություն	2755.0	5127.0	53.7	-2372.0	0.01	0.02
6	Մետալուրգիա	14343772.0	14712110.0	97.5	-368338.0	59.4	60.2
7	Այլ ճյուղեր	509046.0	388047.0	165.2	+200999.0	2.2	1.3
	Ընդամենը	24129907.0	24453518.0	98.7	-323611.0	100.0	100.0

2015թ. առաջին կիսամյակում ընթացիկ գներով արտադրության ծավալի աճ են ապահովել քիմիական, սննդի արդյունաբերությունները և այլ ճյուղերը:

Ըստ տարածաշրջանների 2015թ. թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ունի այսպիսի տեսք.

Հազ. դրամ

Հ/հ	Տարածաշրջանը	2015թ. 1-ին կիս.	2014թ. 1-ին կիս.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Տեսակարար կշիռը, %	
						2015թ.	2014թ.
1	Սպիտակ	1838402.0	2078019.0	88.5	-239617.0	3.0	6.1
2	Տաշիր	746567.0	548419.0	136.1	+198148.0	1.2	1.6
3	Գուգարք	2487380.0	1739782.0	143.0	+747598.0	4.1	5.1
4	Ստեփանավան	3565916.0	2511186.0	142.0	+1054730.0	5.8	7.4
5	Թումանյան	49878601.0	24311819.0	205.2	+25566782.0	81.7	71.3
6	ք. Վանաձոր	2512555.0	2923365.0	85.9	-410810.0	4.2	8.5
	Ընդամենը	61029421.0	34112590.0	178.9	+26916831.0	100.0	100.0

Արտադրության ծավալի աճ են ապահովել Տաշիրի, Գուգարքի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջանների ձեռնարկությունները, նվազում

է արձանագրվել Սպիտակի տարածաշրջանի (88.5%) և Վանաձոր քաղաքի (85.9%) ձեռնարկություններում:

Առաջին կիսամյակի արդյունքներով արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը մարզում կազմել է 7293 մարդ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 6665 մարդու դիմաց կամ աշխատողների թիվն ավելացել է 628 մարդով (109.4%): Աշխատողների թվաքանակն ավելացել է հանքագործական արդյունաբերությունում՝ 1181 մարդով, էլ.էներգիայի արտադրությունում՝ 34 մարդով, այն զգալիորեն նվազել է մշակող արդյունաբերությունում՝ 565 մարդով, այդ թվում՝ քիմիական արդյունաբերությունում՝ 388 մարդով, մետալուրգիայում՝ 31 մարդով, թեթև արդյունաբերությունում՝ 235 մարդով և այլն:

Աշխատանքի արտադրողականությունը 2015թ. անցած վեց ամսում մարզի արդյունաբերությունում կազմել է 7910.2 հազ. դրամ՝ միջին հանրապետական 7592.2 հազ. դրամի դիմաց կամ հանրապետական ցուցանիշը գերազանցում է 104.2%-ով:

Առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից բնեղեն արտահայտությամբ արտադրվել է կոնվերտորային պղինձ (սև պղինձ) 4830.0 տոննա, պղնձի խտանյութ՝ 56011.0 տոննա, ցինկի խտանյութ՝ 2398.0 տոննա, լաքաներկանյութեր՝ 112.2 տոննա, երկաթբետոնյա իրեր և կոնստրուկցիաներ՝ 7316.0 տոննա, ոչ հանքային շինանյութեր՝ 6403.0 տոննա, կարի արտադրանք (բաճկոններ)՝ 192.1 հազար հատ, պանիր՝ 225.7 տոննա, այլուր՝ 6854.0 տոննա, համակցված կերեր՝ 2.5 հազար տոննա, հաց՝ 872.8 տոննա, ոչ ալկոհոլային խմիչքներ՝ 611.4 հազար լիտր, մածուկ՝ 84.2 տոննա և այլն: